

U  $\frac{1273}{1273}$

23.00.02

**ՀՀ ՊԼ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ ԴԱՎԻԹԻ**

**ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՅ  
ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**(ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅՈՒՆ)**

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»  
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր  
Մ. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր  
Մ. Մ. Մարգարյան  
քաղաքական գիտությունների թեկնածու  
Կ.Ա.Գալոյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2015 թ. հուլիսի 27-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան-0037, Կ. Ուլենցու փողոց 56/6: Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ-ի հունիսի 27-ին:

056 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների դոկտոր

 Պ. Ա. Չոբանյան



11-1273

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտվող թեմայի արդիականությունը:** Փոխակերպվող հետխորհրդային հասարակություններում փոփոխվում են արդարության վերաբերյալ պատկերացումները, ինչն էլ արդարության թեման դարձնում է մշտապես արդիական և շարունակական քաղաքական բանավեճերի առարկա: Արդարության չափանիշների հիման վրա պետական շահերի և մարդու, ինչպես նաև հասարակության շահերի հավասարակշռության հաստատումը հրատապ խնդիր է հասարակական զարգացման բոլոր փուլերում:

Արդարության հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի առաջ ծառայած արտաքին և տնտեսափոխակերպում և մարտահրավերներով: Դրանք կապված են համաշխարհային ցանցի և հակասական գործընթացների հետ, որոնք արմատականորեն փոխում են ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններն, այլև սրում են ազգային ինքնիշխանության, ազգային նույնության պահպանման հիմնախնդիրները:

Արդարության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է տարատեսակ սոցիալական և քաղաքական անարդարությունների հաղթահարման առաջնահերթ ուղղությունների մշակման տեսական և գործնական անհրաժեշտությամբ: Միանգամայն ակներև է, որ վերջին տասնամյակներին Հայաստանում լրջորեն փոխվել են արդարության մասին պատկերացումները:

Վերջապես, խնդրի առարկայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է անարդարությանը, սոցիալական անհավասարություններին վերաբերող վիճակագրական, սոցիոլոգիական էմպիրիկ նյութերի առատությամբ և դրանց քաղաքագիտական ընդհանրացման անբավարար մակարդակով:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:** Արդարության հիմնախնդրին են անդրադարձել դեռևս անտիկ աշխարհի հույն մեծագույն մտածողներ Սոկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը<sup>1</sup>, հռոմեացի Ցիցերոնը: Նրանք արդարություն

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս՝ Платон. Государство. Книга четвертая. Модель идеального государства (утопия). Аристотель. Политика. III, VI, М., 1997. Волкова С. В. Алтичинский полис: из истории политико-правовых идей (5

ընկալում էին որպես մարդկային առաքինություններից մեկը, որն ընկալվում էր որպես ընդհանուր բարիք և ոչ թե գուտ անհատական բարիք:

Նոր ժամանակների դասական ազատական մտածողների մոտ արդարության մասին պատկերացումները կառուցվում են մարդկանց հիմնարար իրավունքների և ազատությունների շուրջ<sup>2</sup>:

Նորագույն ժամանակներում գրեթե չկա արդարության վերաբերյալ որևէ գիտական աշխատություն կամ հոդված, որում անդրադարձ չկատարվի, մասնավորապես Ջոն Ռոուլսի «Արդարության տեսությանը»<sup>3</sup>: Ռոուլսի տեսության կարևորությունը կայանում է նրանում, որ նա արդարությունը դնում է սոցիալական և քաղաքական համակարգերի վերլուծության հիմքում: Ռոուլսը կառուցում է լիբերալ-պահպանողական ուղղությամբ արդարություն տեսություն, որն իր էությամբ ունի համընդհանրական նշանակություն և կիրառելի է յուրաքանչյուր ժամանակահատվածում և յուրաքանչյուր հասարակությունում:

Արդարության հիմնախնդրին են անդրադարձել են նաև ժամանակակից հետազոտողներ Ռ. Դվորկինը, Օ. Հյոֆֆեն, Ֆ. Հայեկը, Շ. Էյզենշտադտը, Ա. Մաքսթայրը, Ա. Սենը և այլոք<sup>4</sup>: Նրանք ընդգծում են արդարության գաղափարի կարևորությունը գոյություն ունեցող հասարակական կարգուկանոնը ապահովելու և պահպանելու հարցում:

- 6 вв. до нашей эры) СПб, 2002. Нерсесянц В. С. Сократ. М., 1977. Грот Н. Я. Очерк философии Платона. М., 1896, Голубцова Е. С. (отв. ред.) и др., Античная Греция: Проблемы развития полиса / АН СССР. Ин-т всеобщей истории; Редкол.: М.: Наука, 1983. Карпок С. Г. Лекция по истории Древней Греции. Учебное издание. Отв. ред. А.И. Павловская. М.: «Ладомир», 1997.

<sup>2</sup> St'u Томас Гоббс, «Левифан»: Мысль; Москва; 2001. Джон Локк, Два трактата о правлении, Локк Дж. Сочинения: В 3 т. – Т. 3. – М.: Мысль, 1988. Locke John. Two treatises of government / Edited By Peter Laslett. Cambridge, United Kingdom, Cambridge University Press, 2003. John Locke, Essays on the Law of Nature, edited by Mark Goldie, Cambridge, United Kingdom, Cambridge University Press, 2002. John Locke, An essay Concerning Human Understanding, Londond, Tegg and Son, 1836. Руссо Ж.-Ж. Об общественном договоре. Трактаты. М. Изд. Наука 1969. Руссо Ж.-Ж. Трактаты. М. 1969.

<sup>3</sup> St'u Ролз Дж., Теория справедливости, Новосибирск, Издательство Новосибирского Университета, 1995 р., 511 էջ, ինչպես նաև John Rawls. A Theory of Justice. The Belknap Press of Harvard University Press London, England, Originally published: 1971, 607 էջ

<sup>4</sup> St'u Эйзенштадт Ш. Революция и преобразования обществ. Сравнительное изучение цивилизаций. Пер. с англ. А.В.Гордона под ред. Б.С.Ерасова. Москва. Аспект Пресс. 1999. Макинтайр А. После добродетели: Исследования теории морали М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга, 2000. Хайек Ф. Познание, конкуренция и свобода. СПб., Пневма, 1999, 288 էջ, Хейфе О., Политика. Право. Справедливость: Основы критической философии права и государства. М.: «ГНОЗИС», 1994, 328 էջ, Хейфе О., Справедливость, М.: «Праксис», 2007. 192 էջ, R. Dworkin. Taking Rights Seriously. Harvard University press. 1977,

Վերջին տասնամյակում ԱՊՀ երկրներում, առանձնապես Ռուսաստանի Դաշնությունում, աճել է հետաքրքրությունը արդարության, սոցիալական անհավասարության երևույթների ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական և գործնական հիմնախնդրների նկատմամբ: Ճանաչված ռուս հետազոտողներ Տ.Ա. Ալեքսենայի, Բ. Ն. Կաշնիկովի, Գ. Յու. Կանարչի, Ա.Ա. Հուսեյնովի, Լ. Վ. Ջաթանայի, Վ.Ն. Արգունովան և Ն.Ա. Վեդենինայի աշխատություններում ընդգծվում է արդարության տարբեր հայեցակարգերի, անարդարությունների քաղաքագիտական վերլուծության անհրաժեշտությունը<sup>5</sup>:

Այդ հեղինակներն հիմնականում անդրադարձել են արդարության ազատական (լիբերալ) հայեցակարգերին, որն, ըստ էության, սահմանափակում է արդարություն հասկացության վերաբերյալ պատկերացումների շրջանակը: Բացի այդ, հետխորհրդային երկրների հետազոտողների աշխատություններում բացակայում է արդարության այնպիսի ամբողջական տեսություն, որը մենք տեսնում ենք Արևմուտքում՝ ի դեմս Ջոն Ռոուլսի «արդարության տեսության»:

Արդարության ֆենոմենի վերլուծության անդրադարձել են հայ հետազոտողներ Ն. Մկրտչյանը, Վ. Կարապետյանը, Մ. Հարությունյանը և Գ. Պողոսյանը<sup>6</sup>:

563 էջ, Sen A. The Idea of Justice. The Belknap Press of Harvard University Press Cambridge, Massachusetts. United States of America. 2009. 496 էջ.

<sup>5</sup> St'u Алексеева Т.А. Современные политические теории. – М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000. 479 էջ, Алексеева Т.А. Справедливость: морально-политическая философия Джона Роулза. – М.: Наука, 1992. 112 էջ, Алексеева Т.А. Джона Роулза и его теория справедливости. – Вопросы философии. – 1994, № 10, էջ. 26-37; Алексеева Т.А. Справедливость как политическая концепция: очерк современных западных дискуссий. – М.: МОНФ, 2001 – 241 էջ., Б. Н. Кашников. Либеральные теории справедливости и политическая практика России Великий Новгород: НовГУ имени Ярослава Мудрого, 2004 р., 260 էջ, Г. Ю. Канарш, Социальная справедливость: философские концепции и российская ситуация : монография, . М., Издательство Московского гуманитарного университета, 2011, 234 էջ, Гусейнов А.А. Справедливость //Этика: Энциклопедический словарь /Под ред. Р.Г. Апресяна и А.А. Гусейнова. М.: Гардарики, 2001. 458 էջ, Зараева Л. В. Социальная справедливость как феномен массового сознания: сравнительный социокультурный анализ. Диссертация. Москва. 2008. 134 էջ, Аргунова В. Н. Социальная справедливость: социологический анализ. Диссертация. Санкт-Петербург. 2005. 372 էջ, Веденина Н. А. Современный политический либерализм и проблема социальной справедливости. Диссертация. Москва. 2003. 159 էջ

<sup>6</sup> St'u Ն. Մ. Մկրտչյան: Արդարության գաղափարը սոցիալական իրականության քաղաքական կառուցակցման համատեքստում | «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 135.4, Երևան 2011թ.: Վ. Կարապետյան. «Արդարության հայեցակարգերի էությունը և արանձնահատկությունները նոր և նորագույն ժամանակներում»: Փիլիսոփայությունը արդի աշխարհում: ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ. Երևան, Լիմոշ: 2014 թ., Պողոսյան Գ.

Չնայած արդի հայ հասարակության մեջ արդարության երևույթի նկատմամբ որոշ հետաքրքրության աճին և այդ բնագավառում հայ հետազոտողների որոշ հաջողություններին, այսուամենայնիվ արդարության հիմնահարցը դեռևս չի դարձել քաղաքագիտական ամփոփ ուսումնասիրության առարկա:

Արդարության հիմնախնդիրը ներկայացնում է գիտական լուրջ պրոբլեմ, որն առանձնահատուկ քաղաքագիտական ուսումնասիրություն է պահանջում՝ որոշարկելով սույն առենախոսության թեման՝ Արդարության հիմնախնդիրը ժամանակակից փոխակերպվող հայ հասարակությունում (քաղաքագիտական վերլուծություն):

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Առենախոսության նպատակը արդի հայ հասարակության պայմաններում առաջացող սոցիալական և քաղաքական անարդարությունների դրսևորման ձևերի քաղաքագիտական վերլուծությունն է, ինչպես նաև դրանց հաղթահարման առաջնահերթությունների ուսումնասիրությունը:

Ըստ այդմ՝ հետազոտության հիմնական խնդիրներն են՝

- հետամուտ լինելով անտիկ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ արդարության եզրույթի նորմատիվ բովանդակության էվոլյուցիային՝ դրա բնույթի և առանձնահատկությունների բացահայտումը,
- Արևմուտքի ժամանակակից ազատական տեսություններում արդարության մեկնաբանության փորձի ուսումնասիրությունը, արդարության կոմունիտարիստական մեկնաբանության ուսումնասիրությունը, դրա համեմատումը ազատական մոդելների հետ,
- ժամանակակից Հայաստանում սոցիալական և քաղաքական իրադրության վերլուծությունը՝ քաղաքական արդարության հիմնարար արժեքների լույսի ներքո,
- Փոխակերպվող հայ հասարակությունում առաջացող սոցիալական անարդարությունների և անհավասարությունների դրսևորումների ձևերի բացահայտումը,

Արդի հայ հասարակությունը 21-րդ դարակզբին: Երևան, Լուսաբաց, 2006 թ., 376 էջ. Մ.Ա. Հարությունյան, Արդարության հաստատումը լավագույն քաղաքականությունն է, «Վեմա հայկական ինտելեկտ», 2011, թիվ 4

- քաղաքական կոռուպցիայի՝ որպես քաղաքական անարդարության առավել զարգացած ձևի վերլուծությունը,
- արդարության հավասարապաշտական (եզալիտարիստական) և ազատական մոդելների տարրերի համեմատական վերլուծությունը Հայաստանի գաղափարական տարրապատկերում, դրանց հասարակական արժեքի որոշումը՝ Հայաստանի ներքաղաքական կյանքի հիմնարար հարցերի լուծման եղանակների տեսանկյունից,
- քաղաքական և սոցիալական անարդարությունների հաղթահարման ուղիների կամ ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների հստակեցման,
- քաղաքական արդարության վերաբերյալ հայեցակարգային պատկերացումների ճշգրտումը դրա հիման վրա անարդարությունների հաղթահարման ուղիների և առաջնահերթությունների մշակումը:

**Առենախոսության գիտական նորույթը** այն է, որ.

- ուսումնասիրվել է արդարության մեկնաբանության փորձը Արևմուտքի ժամանակակից ազատական տեսություններում (Ջ. Ռոուլս, Ռ. Նոզիկ, Ռ. Դարենդորֆ և ուրիշներ),
- առաջին անգամ հետազոտվել է արդարության կոմունիտարիստական մեկնաբանությունը Արևմուտքի արդի քաղաքական գիտության մեջ (Ա. Սեն, Ա. Մաքհիթայր, Ֆ. Հայեկ և ուրիշներ): Դրանք համեմատվել են ազատական մոդելների հետ
- համալիր կերպով վերլուծվել է սոցիալ-քաղաքական իրադրությունը ժամանակակից Հայաստանում՝ արդարության եզրութաբանությամբ,
- ցույց է տրված, որ ժամանակակից հայ հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման ճգնաժամային բնույթը նշանակալի չափով պայմանավորված է ԱՊԶ տարածքում արժեքային զերակայությունների արմատական փոփոխությամբ. կոլեկտիվիստական (կոմունիտար) արժեքները, որոնք տիրապետում էին Հայաստանի պատմության խորհրդային շրջանում, դեն նետվեցին հանուն

անհատապաշտության, որը բնութագրական է Արևմուտքում հասարակական զարգացման որոշ արմատական հայեցակարգերի (նորագատական) համար.

- ելքը տեսական ճգնաժամից, որի մեջ հայտնվել է հայ հասարակությունը, դիտվում է հասարակական արդարության այնպիսի հայեցակարգի մշակման և իրականացման մեջ, որը հիմնվում է ազատության և հասարակական սկզբունքների օրգանական միավորման վրա: Արդի հայ հասարակության համար առավել նախընտրելի է սոցիալ-դեմոկրատական մոտեցումը, որը մշակված է Մ. Նասրաումի, Ա. Մենի և այլ հետազոտողների հայեցակարգերում:
- Վերլուծելով Հայաստանում սոցիալական անարդարությունների և անհավասարությունների դրսևորումների ձևերը առաջին անգամ մշակվել և առաջադրվել է սոցիալական և քաղաքական արդարության, հայեցակարգային նոր մոդելը, որը հենվում է անապահով խավերին պետական գործուն երաշխիքներ և պաշտպանություն տրամադրելու, ակտիվ և ձեռներեց քաղաքացիներին՝ պետական արգասավոր աջակցություն ցույց տալու, հարուստներին՝ օրենքի և սոցիալական պատասխանատվության, ինչպես նաև սոցիալական համերաշխության սկզբունքների վրա:
- ուսումնասիրության նորություններից մեկն էլ այն է, որ առաջին անգամ քաղաքական կոռուպցիան բնութագրվել է որպես Հայաստանի ավտորիտար վարչակարգի համակարգակազմավորիչ տարր, քաղաքական և տնտեսական ռեսուրսների, սոցիալ-քաղաքական դիրքերի վերաբաշխման մեխանիզմ, հետևաբար նաև՝ քաղաքական անարդարության առավել զարգացած ձև:
- Մեր կողմից անցկացված քաղաքագիտական վերլուծությունն ակնառու կերպով ցույց է տվել, որ քաղաքական անարդարությունների մեղմացումը պահանջում է մշակել իրավաքաղաքական, ինչպես նաև սոցիալական միջոցառումների համալիր ծրագիր, հստակեցնել դրա իրականացման առաջնահերթությունները: Այդ ծրագիրն ամբողջովին կողմնորոշված է սոցիալական և քաղաքական արդարության, ժողովրդավարության և հայրենասիրության արժեքները և դրանց հաստատման գործում հայկական պետության կարևոր ազգային դերակատարությունը:

**Ատենախոսության տեսական աղբյուրները և մեթոդաբանական հիմունքները:**

Ատենախոսության տեսական աղբյուրները կազմում են անտիկ շրջանի մտածողների (Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի և Ցիցերոնի) ուսմունքները, նոր ժամանակների դասական ազատական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների (Թ. Հոբսից, Ջ. Լոկից մինչև Ժ.Շ. Ռուսո և Ի. Կանտ), ինչպես նաև հետդասական շրջանի քաղաքական մտածողներ՝ Ջ. Ռոուլսի, Ռ. Նոզիկի, Ռ. Դվորկինի, Օ. Հյոֆֆեյի, Ֆ. Հայեկի, Ա. Մաքինթայրի աշխատությունները:

Վերջապես, ատենախոսության տեսական աղբյուրներից են հետխորհրդային քաղաքագետների աշխատանքները, որոնք սվիրված են փոխակերպվող հասարակության մեջ սոցիալական և քաղաքական անարդարության հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հետազոտության մեթոդաբանական հիմունքների մեջ զուգորդվել են համեմատական և համակարգային մոտեցումները, կիրառվել են համանմանություն և համադրման, ինչպես նաև փաստերի և տվյալների քաղաքագիտական վերլուծության մեթոդները:

**Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը**

կայանում է նրանում, որ արդարության հասկացության վերլուծությունը նախ՝ իր ներդրումն է մտցնում քաղաքագիտական հիմնական հասկացությունների և կատեգորիաների մշակման գործում և, երկրորդ՝ հարստացնում է տվյալ հասկացության մեկնաբանությունը քաղաքագիտական տեսության մեջ: Երրորդ՝ կարող է հիմք ծառայել հիմնախնդրի ավելի խորացված ուսումնասիրությունների համար:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ստացված արդյունքները կարող են օգտագործվել արդարության պրոբլեմատիկայով քաղաքագիտության դասընթացի մշակման համար: Դրանք կարող են կիրառվել նաև սոցիալական, քաղաքական կառավարման ոլորտներում՝ ճգնաժամային իրավիճակների մոդելավորման նպատակով:

**Ատենախոսության փորձարկումները:**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,

սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Քաղաքական հետազոտությունների բաժնում, իսկ դրա հիմնադրություններն արտացոլված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (հինգ ենթագլուխներով), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 130 աշխատանք: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 150 էջ:

### ԱՏԵՆԱՅՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը, ցույց է տրվում դրա մշակվածության աստիճանը, ձևակերպվում են հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդաբանական սկզբունքները, ներկայացվում է ատենախոսության գիտական նորույթը, թեմայի ուսումնասիրության տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ **«Արդարության քաղաքական-իրավական հայեցակարգերը Արևմուտքի քաղաքական մտքի անտիկ, դասական և ժամանակակից շրջանում»**, ներկայացվում են Պլատոնի, Արիստոտելի, Թ. Հոբսի, Ջ. Լոկի, Ժ-ժ. Ռուսոյի, Ի. Կանտի, ինչպես նաև Ջ. Ռոուլսի, Ռ. Դարենդորֆի, Ռ. Դվորկինի և ուրիշ մտածողների հասարակական-քաղաքական հայեցակարգերը արդարության հիմնախնդրի սոցիալ-քաղաքական և իրավական տեսանկյունների վերաբերյալ:

Առաջին ենթագլխում՝ **«Արդարության վերաբերյալ մտեցումները իրավաքաղաքական մտքի պատմության անտիկ և դասական շրջանում»**, նախ ուսումնասիրվել են Սոկրատեսի, Պլատոնի և Արիստոտելի հայացքներն արդարության վերաբերյալ, այնուհետև՝ Թ. Հոբսի, Ջ. Լոկի, Ժ-ժ. Ռուսոյի, Ի. Կանտի արդարության հայեցակարգերը:

Պլատոնի և Արիստոտելի ընդհանրությունը կայանում է նրանում, որ նրանք արդարության խնդիրը փորձում էին լուծել էլնելով պետության շահերից, և արդարությունն

ընկալվում էր որպես ընդհանուր բարիք ողջ հասարակության համար, այլ ոչ թե անհատի: Անհատն ընկալվում էր պետության շահերի իրականացման և պաշտպանության առաջամարտիկ: Պոլիսի քաղաքացիների փոխհարաբերությունների կարևորագույն առանձնահատկություն էր պոլիսի քաղաքացիների ոչ իրավահավասար լինելը: Այդ գաղափարը արտահայտում է Արիստոտելի սկզբունքը՝ «հավասարը հավասարների կամ անհավասարը անհավասարների համար»:

Անտիկ դարաշրջանում մենք տեսնում ենք արդարության ընկալման երկու ավանդույթներ. առաջինը հունական ավանդույթն է (Սոկրատես, Պլատոն և Արիստոտել), որն արդարությունը նույնացնում է բարիքի գաղափարի հետ, իսկ երկրորդը՝ հռոմեական ավանդույթն է (Ցիցերոն), որի շրջանակներում առաջին անգամ հստակորեն ձևակերպվեցին իրավունքի գաղափարն և արդարության իրավական հայեցակարգը:

Թ. Հոբսն առաջինն էր քաղաքական պատմության մեջ, ով բարիք հասկացությունը փոխարինեց իրավունք հասկացությամբ: Ջ. Լոկը նշում է, որ այնտեղ, որտեղ չի գործում օրենքը, չկա արդարության իրականացման ոչ մի երաշխիք<sup>7</sup>:

Եթե գնահատենք դասական ազատականության արդարության տեսությունը, կարող ենք ասել, որ այստեղ արդարությունն ընկալվում է որպես իրավունք, այլ ոչ թե բարիք: Ընդամենն անհատի իրավունքներն ընկալվում են առաջնային և անօտարելի, իսկ պետության գլխավոր խնդիր է հռչակվում այդ իրավունքների ապահովումը: Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների հիմքում ընկած է արդարությունը: Արդարության հիմքում ընկած է իրավունքների հավասարությունը, որը բացառում է մի մարդու առավելությունը մեկ այլ մարդու նկատմամբ:

Խոսելով պետության ներսում սոցիալական արդարության և դրա արժանիքների առանձնահատկությունների մասին՝ Կանտը նշում է, որ արդար պետական համակարգը դա այն համակարգն, որտեղ մարդն ունի օրենքով սահմանված հնարավորինս շատ ազատություններ, և յուրաքանչյուրի ազատությունը համատեղելի է մյուսների ազատության հետ: Երբ կարծիքով՝ արդարությունն իր ամենակատարյալ տեսքով

<sup>7</sup> Sh 'u, Томас Гоббс, «Левизафтан»: Мысль; Москва; 2001. էջ 56-59

<sup>8</sup> Sh 'u, Джон Локк, Два трактата о правлении, Локк Дж. Сочинения: В 3 т. - Т. 3. - М.: Мысль, 1988, էջ 334



Առաջին հայացքից տվյալ հիմնահարցը, չնայած իր արդիականությանը, առերևույթ թվում է գրեթե հասարակ հարց: Իսկապես, բնակչության մեծամասնությունը համաձայն է նրա հետ, որ ժամանակակից հայ հասարակությունը անարդար հասարակություն է, իսկ գոյություն ունեցող սոցիալական պրակտիկաները հեռու են այն իդեալներից, որոնք սովորաբար նկարագրվում են «արդարություն» եզրույթի միջոցով:

**«Սոցիալական արդարության ազգային մոդելի էությունը և նրա իրագործման առաջնահերթությունները»** ենթազվիում քննարկվում են արդարության ազգային մոդելի մշակման հայեցակարգային առանձնահատկությունները, սոցիալական անարդարությունների մեղմացման հիմնահարցերը:

Վերլուծելով Հայաստանում սոցիալական և քաղաքական անարդարությունների առանձնահատկությունները, ատենախոսության մեջ նշվում է, որ արդի Հայաստանում սկզբունքորեն մերժելի է արդարության նկատմամբ նախկին համայնավարական, հավասարապաշտական և պատերախոսական մոտեցումը: Նաև անընդունելի է ազատական մոտեցումը, որը շեշտադրելով սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքների ձևական հավասարությանը, գործնականում անտեսում է դրանց իրականացման կոնկրետ պայմանները և իրական հնարավորությունները: Անդրադառնալով սոցիալական արդարության ազգային և տեղայնացված հայեցակարգի մշակման խնդրին, ատենախոսության մեջ քննարկվում են արդարության նոր սկզբունքների ձևակերպման, ինչպես նաև սոցիալական անհավասարությունների և անարդարությունների դեմ պայքարի համալիր տեղայնացված ռազմավարական ծրագրի մշակման հարցերը:

Անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում վերջերս քաղաքական բողոքի յուրահատուկ ձև է ստացած, այսպես կոչված, «գայրացած երիտասարդների շարժմանը», որի հասարակական բեմ դուրս գալուստն սկսել են մեծապես նպաստել տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաները՝ համացանցը և սոցիալական ցանցերը: Նրանք արագ «կրթվում» են, ստանալով պատկերացում այն մասին, թե սոցիալական և քաղաքական անարդարությունները կարգավորող ինչ մեխանիզմների միջոցով են մեղմացնում պետական կառավարման արդյունավետ մոդել ունեցող զարգացած երկրները:

Հետագա շարադրանքում անդրադարձ է արվում արդարության ազգային մոդելի առաջնահերթ խնդիրների հստակեցման և դրանց լուծման գործնական հարցերին:

**«Քաղաքական անարդարության դրսևորման ձևերը և հաղթահարման մեխանիզմները»** ենթազվիում առաջադրվում է այն թեզը, որ Հայաստանում քաղաքական արդարության գերխնդրի լուծումը անհնար է առանց ավտորիտարիզմի, բյուրոկրատիզմի, կոռուպցիայի, իշխանության տարբեր ճյուղերի սերտաձվածության մեխանիզմներ վերացնելու:

Վերլուծելով քաղաքական անարդարությունների հիմնախնդիրները, հետևություն է արվում, որ Հայաստանում դրանց դրսևորման ձևերի հիմնապատճառը հանդիսանում է Հայաստանում գործածող ավտորիտար քաղաքական համակարգը: Դրա զլխավոր առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման, հանրային քաղաքականության հիմնական լծակները կենտրոնացվել են կառավարող վերնախավի ձեռքերում: Հայ ժողովրդի, բնակչության մեծամասնության հիմնարար պահանջմունքների նկատմամբ անտարբեր և, որոշ դեպքերում, քամահրական վերաբերմունքն է հանդիսանում Հայաստանի քաղաքական համակարգի առավել խոցելի կողմերից մեկը: Պատահական չէ, որ օրինակականության և արդարության իրավական նորմերի պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված բազմիցս հնչեցվող պաշտոնական հայտարարությունները հաճախ մնում են մերկախոս դեկլարացիաներ, քանի որ չեն ամրապնդվում գործով:

Քննարկելով Հայաստանում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքների ապահովման հարցը, անդրադարձ է արվում քաղաքական իրավունքների խախտումների աճի միտումներին, հավաստելով, որ մեզանում ժողովրդավարության կարևորագույն չափորոշիչը՝ ընտրության իրավունքը բավարար չափով երաշխավորված և պաշտպանված չէ: Դրա մասին են վկայում ատենախոսությունում մեջբերված բազմաթիվ միջազգային և տեղական զեկույցներն ու հետազոտությունները:

Հետագա շարադրանքում անդրադարձ է արվում քաղաքական կոռուպցիայի՝ որպես քաղաքական անարդարության առավել զարգացած տեսակի հարցին, հիմնավորելով այն, որ քաղաքական անարդարությունների դրսևորման ձևերի աճի պատճառներից մեկն էլ

քաղաքական կոռուպցիայի, վարչական ռեսուրսի հանիրավի օգտագործման աճն է: Հայաստանի իշխանություններն անհրաժեշտ կամք և հետևողականություն չեն դրսևորում կոռուպցիայի, վարչական ռեսուրսների անօրինական օգտագործման դեմ մղվող պայքարում: Այդ լուրջ իրավախախտումների նկատմամբ «աչքակապության» տպավորիչ մասշտաբները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ կոռուպցիայի համար պատասխանատվության անխուսափելիությունը՝ և՛ տեսական, և՛ գործնական առումներով, իսկական ուտոպիա է: Մյուս կողմից, հասարակական գիտակցությունը չի կարող սուր կերպով չարձագանքել այդ պրակտիկային:

Հայաստանի բնակչության նշանակալի մասը իշխանության մեջ չի տեսնում հասարակական և ազգային շահերի արտահայտիչին, ավելին՝ նրան դիտում է որպես իրեն հակադիր ուժ, իր շահերը ոտնահարող գլխավոր գործոն:

Ատենախոսությունում հիմնավորվում է նաև այն գաղափարը, ըստ որի անհրաժեշտ է ստեղծել և մշակել քաղաքական ու սոցիալական այնպիսի ինստիտուտներ և օրենքներ, որոնք ոչ միայն կլինեն արդյունավետ, այլ նաև արդար, ինչն հատկապես կարևոր է սոցիալական և քաղաքական արդարության սկզբունքների հետևողական իրագործման համար:

Հայաստանի քաղաքական համակարգն այսօր հայտնվել է քաղաքական վերափոխումների և վերադասավորումների հրամայականի առաջ: Անկասկած, այսօր հարկավոր են համակարգային փոփոխություններ, որոնք կապահովեն լիարժեք քաղաքական մրցակցությունը, արդյունավետ ժողովրդավարական ընթացակարգերը և տեխնոլոգիաները, ինչպես նաև իշխանության և քաղաքացիական հասարակության հակադարձ կապի ամրապնդման մեխանիզմները:

Սոցիալական և քաղաքական արդարության սկզբունքների հետևողական իրականացումը թույլ կտա ավելի արգասավոր կերպով լուծել հայկական պետականության սոցիալ-քաղաքական հիմնահարցերը:

**«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու ընդհանրացումները, որոնցից առանձնացված են հետևյալները.

1. Արդարության նկատմամբ ժամանակակից ազատական մտեցումների (Ջ. Ռոուլսի, Ռ. Նոզիկի, Ֆ. Հայեկի և ուրիշների) առանձնահատկությունների վերլուծության հայեցակարգային հետևությունն այն է, որ այդ մտեցումներից առավել մշակվածը և հիմնավորվածը Ջ. Ռոուլսի «Արդարության տեսությունն» է: Հեղինակը կառուցել է ազատական-պահպանողական ուղղվածությամբ տեսություն, որն իր էությամբ կիրառելի է յուրաքանչյուր ժամանակահատվածում և յուրաքանչյուր հասարակությունում: Ինքը՝ հետազոտողը, իր տեսությունը կոշտ կերպով չի կապակցել որևէ կոնկրետ քաղաքական վարչակարգի հետ՝ գտնելով, որ այն համատեղելի է տարբեր տեսակի վարչակարգերի հետ: Նրա և մյուս ազատական քաղաքագետների ուշադրության կենտրոնում են գտնվում պետության կողմից քաղաքացիներին հավասար իրավունքների տրամադրման և դրանց իրականացման ընթացակարգերի մշակման հարցերը:

2. Անդրադառնալով խորհրդային Հայաստանում սոցիալական արդարության վիճակին՝ հեղինակը եկել է այն եզրակացության, որ խորհրդային միությունը, անվճար կրթություն, բուժում, հանգիստ, ծերության հաշմանդամության անչափահաս երեխաների կենսաթոշակներ և նպաստներ ապահովելով, բնակչության զբաղվածության խնդիրը իրագործելով, ստեղծել էր սոցիալական արդարության սեփական և ուրույն համակարգը, որը տվյալ ժամանակահատվածում, կարծես, բավարարում էր բնակչության ճնշող մեծամասնությանը:

3. Ատենախոսության ուսումնասիրության կարևորագույն տեսական-մեթոդաբանական արդյունքը խտացված է այն եզրակացության մեջ, որ Հայաստանում և ԱՊՀ մյուս պետություններում արդարության ազատական մոդելների կիրառման պրակտիկան հանգեցնում է սոցիալ-քաղաքական կյանքում տարատեսակ անհավասարությունների և անարդարությունների աննախադեպ աճին:

4. Ժամանակակից հայ հասարակության մեջ ծավալվող քաղաքական գործընթացների քաղաքագիտական վերլուծության հետևությունն այն է, որ հասարակության ներսում սոցիալ-քաղաքական զարգացումների ճգնաժամային բնույթը նշանակալի չափով պայմանավորված է ողջ ԱՊՀ տարածքում արժեքային գերակայությունների համակարգի արմատական փլուզմամբ: Կուլեկտիվիստական

արժեքները, որոնք տիրապետում էին Հայաստանի պատմության խորհրդային շրջանում, փոխարինվեցին անհատապաշտական արժեքներով, որոնք բնութագրական են հասարակական զարգացման արևմտյան որոշ արմատական հայեցակարգերի (նորագատականության համար):

5. Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ Հայաստանի պետական իշխանության կողմից մշակվող երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը միտված են միայն երկարաձգելու ծրագրով պայմանավորված նպատակների իրագործման ժամկետները, և ըստ էության, մնում են «թղթի վրա գրված» որևէ կերպ չնպաստելով սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Հետևաբար, առաջարկվում է մշակել սոցիալական անարդարությունների և անհավասարությունների դեմ պայքարի համալիր երկարաժամկետ քաղաքական ռազմավարական ծրագիր, որի համար կպահանջվի իշխանության և քաղաքացիական հասարակության լայն համագործակցությունը՝ հայ հասարակությունում սոցիալ-քաղաքական ոլորտում տարատեսակ անարդարությունների և անհավասարությունների հայտնաբերման, դրանց վերացման ուղիներ մշակելու նպատակով:

6. Քաղաքական արդարությունը ատենախոսության մեջ ներկայացվում է, նախ և առաջ որպես քաղաքական իրավահավասարություն, որպես իշխանության հասարակության առջև պատասխանատվության մակարդակի բարձրացում: Նաև պետության կողմից տրամադրվող իրական սոցիալական երաշխիքների ամբողջություն, որը պահանջում է մարդկանց քաղաքացիական և քաղաքական իրավունքների ոտնահարման բոլոր դրսևորումների վճռական հաղթահարում: Հայ հասարակության մեջ հեռանկարում հենց այդ սկզբունքների վրա պետք է հիմնված լինեն քաղաքական արդարության մասին պատկերացումները: Այդ առումով նաև խիստ անհրաժեշտ է իրապես ապահովել օրենքի գերակայությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում:

7. Ելքը տևական սոցիալ-քաղաքական ճգնաժամից, որի մեջ հայտնվել է ժամանակակից հայ հասարակությունը, պահանջում է մշակել հասարակական արդարության այնպիսի հայեցակարգ, որը հիմնվում է ազատության և հասարակական

բարիքի սկզբունքների օրգանական միասնության վրա: Դա համապատասխանում է արդարության հիմնախնդրի լուծման նկատմամբ «չափավոր», հավասարակշռված մոտեցման մշակման պահանջներին: Արդյունքում հիմնավորվել է, որ այս տեսանկյունից Հայաստանի և ԱՊՀ մյուս պետությունների համար առավել նախընտրելի է արդարության ոչ թե ազատական կամ դրա մասնավոր դրսևորումը հանդիսացող նորագատական, այլ սոցիալ-դեմոկրատական մոդելը:

#### **Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.**

1. Թադևոսյան Հ. Դ., «Արդարության վերաբերյալ հայեցակարգերի պատմահամեմատական վերլուծության փորձ», Կանթեղ: Գիտական հոդվածներ: 2-3(59-60), - Եր.: Ասողիկ, 2014. 231-240 էջեր
2. Թադևոսյան Հ. Դ., Ջոն Ռոուլսի «Արդարության տեսությունը», Լրաբեր: 1(643), Երևան, «Գիտություն» հրատ., 2015. 253-260 էջեր
3. Թադևոսյան Հ. Դ., «Սոցիալական արդարության ազատական և սոցիալ-դեմոկրատական ըմբռումների համեմատական վերլուծության փորձ», Երևան, Հեղինակային հրատ., 2015.-16 էջ

Айк Тадевосян

## Проблема справедливости в современном трансформирующемся армянском обществе

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”. Защита состоится 27 июля 2015г. в 14:00 часов на заседании специализированного совета 056 “Политические науки и международные отношения” ВАК РА, действующего по адресу ул. К. Улнеци 56/6, Ереван 0037, Республика Армения

### Резюме

Целью диссертации является политологический анализ форм проявления социальной и политической несправедливости в условиях современного армянского общества, а также изучение приоритетности их преодоления.

Работа состоит из введения, двух глав (пяти подзаголовков), выводов и списка использованной литературы. Во введении обосновывается актуальность исследования, основные цели и задачи, теоретическое и практическое значение диссертации, а также методология исследования.

В первой главе - **«Политико-правовые концепции справедливости в античную, классическую и современную эпоху политической мысли Запада»** - представлены политико-правовые концепции Платона, Аристотеля, Т.Гоббса, Дж.Локка, Ж-Ж.Руссо, И.Канта, а также Дж.Ролза, Р.Дарендорфа, Р.Р.Дворкина и других мыслителей относительно социально-политических и правовых точек зрения на проблему справедливости.

В первом подзаголовке - **«Подходы к справедливости в античную и классическую эпохи политико-правовой мысли»** - рассмотрены также воззрения Сократа, Платона и Аристотеля о справедливости, затем – концепции справедливости Т.Гоббса, Дж.Локка, Ж-Ж.

Во втором подзаголовке под названием **«Современные концепции проблемы справедливости: сравнительный анализ»** изучаются взгляды на справедливость

представителей современной политической мысли Запада - Дж.Ролза, Р.Нозика, Р.Дарендорфа, А.Сена.

В кругах приверженцев социально-демократического подхода справедливость выступает и как требование поддержки государства: создание соответствующих возможностей для социального выбора, во-вторых, создание возможностей для политического участия и борьбы с бюрократией, в-третьих, создание возможностей политической самоидентификации, и наконец, правовое требование о невмешательстве государства в частную жизнь личности. Все это соответствует политическому запросу на разработку новой модели справедливости в современном армянском обществе.

Во второй главе - **«Армянское общество в свете базовых ценностей политической справедливости»** - представлено толкование разных моделей справедливости и концептуальные основы создания национальной модели справедливости.

В подзаголовке **«Осмысление общественной ситуации в терминологии справедливости»** характеризуются политические аспекты роста социального неравенства и социальной несправедливости, особенности различных моделей социальной справедливости. В правовой и политической практике сложилась такая ситуация, такая система взаимоотношений, что, кажется, именно несправедливость является ее «законом».

В подзаголовке **«Сущность национальной модели социальной справедливости и и приоритеты ее реализации»** рассматриваются концептуальные особенности создания национальной модели справедливости, проблемы смягчения социальной несправедливости.

В подзаголовке **«Формы проявления политической несправедливости и механизмы ее преодоления»** выдвигается тезис о том, что в Армении решение сверхзадачи политической справедливости не возможно без искоренения авторитаризма, бюрократии, коррупции, тесного сращивания разных ветвей власти друг с другом.

В **заключении** изложены основные теоретические и аналитические выводы исследования.

Hayk Tadevosyan

## The Issue of Justice in the Modern Transforming Armenian Society

Dissertation under 23.00.02 chipher - "Political Institutions and Processes" to be awarded PhD in Political Science. The public defense of the dissertation will take place on July 27, 2015 at 14:00, in the National Strategic Research Institute, MoD RA at the 056 "Political Sciences and International Relations" HAC Specialized Chamber session. (Address: K. Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Republic of Armenia)

### Resume

The aim of the Thesis is the political science analysis of the forms of demonstration of social and political injustices, arising in the conditions of the modern Armenian society, as well as the study of priorities for overcoming thereof.

The work is comprised of introduction, two chapters (with five subchapters), conclusions and the list of used literature. In introduction the actuality of the research, its main goals and issues, theoretical and practical importance of the Thesis, as well as the methodology of the research are grounded.

In the first chapter "Political-Legal Conceptions of Justice in Antique, Classical and Modern Periods of Political Thought of the West" the socio-political conceptions of Plato, Aristotle, Th. Hobbes, J. Locke, J. J. Rousseau, I. Kant, as well as J. Rawls, R. Dahrendorf, R. Dworkin and other philosophers are represented in regard to the socio-political and legal viewpoints on the issue of justice.

In the first subchapter "Approaches to Justice in Antique and Classical Period of the History of Legal-Political Thought" firstly the views on justice of Socrates, Plato and Aristotle, then the conceptions on justice of Th. Hobbes, J. Locke, J. J. Rousseau, I. Kant are studied.

In the second subchapter "Modern Conceptions on the Issue of Justice: Comparative Analysis" the views on justice of the representatives of contemporary political thought of the West J. Rawls, R. Nozick, R. Dahrendorf, A. Sen are studied.

Within the scope of social-democratic approach justice appears as a demand for state assistance – creation of respective opportunities for social selection, secondly, creation of opportunities for political participation and struggle against bureaucracy, and thirdly, creation of opportunities for civil self-identification. And finally, a legal demand of non-interference into the private life of an individual by the state. All this corresponds to the political demands of development of a new model of justice in modern Armenian societies.

In the second chapter "Armenian Society in the Light of Fundamental Values of Political Justice" the interpretation of different models of justice and the conceptual bases for development of a national justice model are represented.

In subchapter "Comprehension of Public Situation in Terminology of Justice" the political aspects of the unprecedented growth of social inequalities and injustices, distinctive features of different models of social justice are described. Armenian political scientists and sociologists speak on ambiguity of justice values and criteria, and, in particular, imperfection of legal norms, which an ordinary citizen merely cannot follow in everyday life. In legal and political practice such a situation, such a network of relationships is created, that the injustice seems to be its "law". The majority of the population agrees that the modern Armenian society is an unjust society, and the existing social practices are far from the ideals that are commonly described by the term "justice".

In subchapter "Essence of the National Model of Social Justice and Priorities of Realization thereof" the distinctive conceptual features of development of a national model of justice, the issues of mitigation of social injustice are discussed.

In subchapter "Forms of Demonstration of Political Injustice and Mechanisms of Overcoming" the thesis that the solution of the top priority issue of political justice in Armenia is impossible without elimination of the mechanisms of authoritarianism, bureaucracy, corruption, concretion of different branches of authority is proposed.

Analyzing the problems of political injustices, a conclusion is drawn that the basic reason of the forms of demonstration thereof is the authoritarian political system practiced in Armenia. The paramount distinctive feature of this is the fact that the main levers are centralized in the hands of the ruling elite. The conclusion sums up the main outcomes of the



